

Թիւնք դասուած են դժիկով ՇԱՐԺՈՒՄՆ ա- նուան տակ: Ըստ այսմ պէտք է ջնջել Թ. 276 եւ տեղեկութիւնքն «1900—1901, Թ. 1—20» յաւելուլ Թ. 277ին վրայ իբրեւ լրացուցիչ մաս:

Թ. 323. «ԱՐԳԱՒԱՆԴ. Կիսաշարաթա- Թերթ. Վանա 1905: Խմբագիր Տ. Էլմա- սեան: Շարունակութիւն ՀԱՅԱՐԹԻՐ»:

Տեղեկութիւնքն առնուած են հաւանորէն Հ. Կարապետեանի ցուցակէն (տե՛ս ՀԱՅԱ- ԹԵՐԹ). իսկ վերջնոյս մէջ՝ Հայաթերթի մէկ ծանուցումէ: Կը կարգամ «Յաւելուած Հայա- Թերթի Թիւ 124 (ա՛յսպէս, ոստամ՞մը Թ. 114էն) կը հաղորդէ (Վանա, 13 Նոյ. 1904). «ԱՐԳԱՒԱՆԴ. Կիսաշարաթաթերթ, աղպային, քաղաքական, գրական: «Արգա- ւանդ» պիտի սկսի հրատարակուիլ յառաջի- կայ Յունվար 1էն սկսեալ շարաթը երկու ան- դամ, «Հայաթերթ»ի ծաւալով եւ միեւնոյն ուղղութեամբ» են:

Չկայ որ եւ է հետք, թէ հրատարակուած է ծանուցում Թերթիս: Հաւանորէն լոյս չէ տեսած:

Թ. 698. ԱՐԵԳ, Բագու 1915, Թ. 1—57: Ինձ ծանօթ են Թերթիս 1—236 թուերը:

Թ. 843. Արարատեան աշխատար, էջ- միածին 1919, Թ. 1—12: Մեր Մատենադա- րանին մէջ ունինք Թերթիս 23 եւ 24 թու- երն ալ:

Թ. 1273. ԲԱՆԻՆԵՐ. Մարտէյլ. սկսած է 1925ին:

Թ. 1402. «ԿԻԼԻԿԻԱ, Նիւ Եորկ, 19- թ.»: Լոյս տեսած է հայտատու տաճկերէն 1917—1919:

Թ. 1409. «ՍՍԴԱՅԷԼ, Նիւ Եորկ?»: Հրատարակուած է ի Նիւ Եորկ, Ա. տարի 1923/24, Թ. 1—12: Բ. տարի 1924, Թ. 1—6:

Կարգ մը Թերթերէն, որոնք յիշատակու- Թիւն չեն գտած ցուցակիս մէջ, կը յիշեմ՝

ԱՉԱՏ ԽՕՄԲ, Մարտէյլ 1927, Թ. 1—6:

ԱՉԱՏ ԿԱՐԾԻՔ, Նիւ Եորկ 1922, Թ. 1—2:

ԱՌԵՒՏՈՒՐ, Նիւ Եորկ 1922—1925:

ԱՌԾԻԻ, Կ. Պոլիս 1928, Թ. 1—20:

ԳՈՅԱՄԱՐՏ, Մարտէյլ 1931, Թ. 1—16:

ԾՕ՝ ՎԱՌ, Չիքագոյ 1927—1932:

ՄՈՒՐ, շարաթաթերթ, Թիֆլիս 1918, Թ. 1:

ՆՈՐ ՌԱՀՎԻՐԱՅ, Սոֆիա 1926/27, Թ. 1—15:

ՆՈՐ ՔՆԱՐ, Աթէնք 1926, Թ. 1:

ՇԻՐԱԿ, Աթէնք 1928, Թ. 1—24:

ՈՎԱՍԻՍ, Նիկոսիա 1928, Թ. 1—12:

ՊԱՀԱԿ, Սեւանիկ, Թ. 1—49:

ՋԱՀԱԿԻՐ, Պէյրութ, Թ. 1—12:

ՌԱՀՎԻՐԱՅ, Սոֆիա, Թ. 1:

ՍՈՖԻԱ, Սոֆիա 1925, Թ. 1—2:

ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ. Հ. Պատուիրակութեան Պա- րիս 1921, Թ. 1—3:

ՓԻԻՆԻԿ, Պէյրութ 1924/25, Թ. 1—117:

Աւելի կատարեալ Յուցակ մը հնարուոր պիտի ըլլայ կազմել, երբ բարեփոխուի Ժա- մանակը եւ ձեռնարկուի համադրածակցու- Թեամբ գրել Հայոց պարբերական մամուլի պատմութիւնը:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Հնգադարեան Յիշատակարան Ստամբուլի Ս. Գէորգ Եկեղեցոյ (1461—1935): Կ. Պոլիս 1935, տպ. Թերգեան Եղբարց, ՏՊ, էջ 352, պատկերագրով:

Հայարնակ Սամաթիոյ 1935ի յորեւանը առիթ կու տայ հեղինակին ձեռնարկելու այս ղեղեցիկ հատորիս: «Երկու Խօսք»ով ան կը պարզէ իւր ծրագիրը. Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցոյն եւ առ հասարակ թաղին «Յիշա- տակարան մը պատրաստել»՝ վստահ թէ «հին եւ նոր, բոլոր Սամաթիացիները, ուր որ ալ գտնուին, պիտի փափաքին վերծանել զայն եւ հրճուիլ, որ Սամաթիա վեց դար առաջուրնէ սկսեալ՝ եղած է Պոլսահայութեան ամէնէն զարգացած, ամէնէն ճարտարագէտ, ամէ- նէն վաճառական, ամէնէն արուեստագէտ թաղը...»: Այս ոգեւոր տողերն իսկ բաւա- կան են համոզելու թէ ինչ տաք շունչով գրուած են ամբողջ երկիս էջերը: Այս բնա- բանին համաձայն մենք պիտի սպասէինք պա- տահական մէկ գործ մը գտնել, զոր առիթ- ները կը ստեղծեն միօրեայ կեանքով: Սա- կայն որչափ ալ աշխատութեանս որոշ մա- սերը այդ հանգամանքով կը ներկայանան, կան կարեւոր գլուխներ, որոնք պոլսահայ անցեալին եւ ընդհանրապէս Հայոց Նոր Գա- բու Եկեղեցական, քաղաքական եւ մշակու- Թային պատմութեան համար ընտիր նիւթեր կը մատակարարեն:

Յաջորդ էջերու մէջ կու տանք զբնիւր բո- վանդակութիւնը.

Սամաթիոյ Ս. Գէորգ հնադարեան Եկեղե-

ցին նարատակակէտն է երկիս. ուստի հարկ կը համարի հեղինակը հայ բանասէրներու գրութիւններէն համառօտ տեղեկութիւններ քաղել անոր դոյութեան ու պատմութեան մա- սին՝ նախ քան Պոլսոյ առումը (էջ 17—20): Բրուսայի Յովակիմ Եպիսկոպոսին պատրիարք ըլլալով հայ Եկեղեցական ու քաղաքական պատմութիւնը ի Թուրքիա նոր փուլի մէջ կը մտնէ. Սամաթիոյ համար եւս այս մեծ նշանա- կութիւն կ'ունենայ, վասն զի Ս. Գէորգ Եկեղե- ցին կ'ըլլայ պատրիարքանիստ: Հեղինակը կը հիւսէ այս առիթի Պոլսոյ գրաման եւ պատ- րիարքութեան հաստատման պատմութիւնը, զանազան նահանգներէ հայերու փոխադրու- Թիւնը, կը ճշդէ Ս. Գէորգ Եկեղեցոյ Հայոց սեփականուելու թուականը իբր 1461 (էջ 20—50): Ասոր կը կցէ այն պատրիարքներու պատմութիւնը, որոնք մինչեւ 1641 Սամա- Թիա պաշտօնավարած են, տալով համառօ- տիւ իւրաքանչիւրին գործունէութեան ու- ղուակերծը (էջ 50—78): Սամաթիա դադրե- րով պատրիարքանիստ ըլլալէ՝ Ս. Գէորգ Եկե- ղեցին, ինչպէս միւս Եկեղեցիները, կը կա- ուավարուի պատրիարքի փոխանորդով՝ միւ- Թէվէլիով, որուն ձեռքին տակ կը գտնուին Եկեղեցականներ ու հողաբարձուներ: Այս վիւ- Բէվէլիով շրջանով հեղինակը շատ հե- տաքքերական գլուխ մը կը բանայ. ան կ'օգ- տուի ոչ միայն տպագիր յիշատակարաններէ՝ Թորգոմեանի, Սրուանձաեանցի, Աճառեանի, Աղաւնուանց Երկերէն, այլ զլիսուորարար իրեն ուսումնասիրութեան աղբիւր կը ծա- ուայեն թաղական Խորհուրդի գանձատան մէջ պահուած հրովարտակները, «պէրաքները եւ ԽՕՏԻՔՆԵՐԸ». հոս լրիւ դադարի կը ստա- նանք թաղին Եկեղեցիներու եւ ազգային հաս- տատութիւններու ու կալուածներու տնտե- սական ու վարչական վիճակի մասին (էջ 79— 110): Առանձին գլխով կը խօսուի Գերագոյն Ժողովի մէջ միւթէվէլիներու գործունէու- Թեան մասին (էջ 111—124): Ասոր կը յա- ջորդէ մատենիս ամէնէն ծաւալուն հա- տուածը՝ Թաղականութիւններ 1860ի սահմա- նադրութիւնէն մինչեւ 1935: Հոս տարուէ տա- րի կը նշանակուին թաղական խորհրդի գլխա- ւոր անդամները, ըստ կարելոյն լուսանկար- ներով. համառօտ գեկոյցներ կը տրուին ա- նոնց մասին (էջ 125—258): Գլուխ մը նուի- րուած է Ս. Գէորգի վերաշինութեան ու նո-

րողութեան (էջ 259—285), քարոզիչ քահա- նաներու ու քահանայից դասերուն (էջ 285— 294), նոյնպէս դպիրներուն ու դպրատեա- րներուն, ճոխ կենսագրական նօթերով ու լու- սանկարներով (էջ 295—316): Մասամբ իբր լրացուցիչ մաս կը կցուին առանձին գլուխ- ներ՝ Գլխադիր Ս. Յակոբ Եկեղեցոյ, Սամա- Թիոյ կից (էջ 316—321), Ս. Կարապետի մատոան մասին (էջ 322—324): Յաջորդ էջերը կը գրուեն Սամաթիոյ Սանուց միւ- Թիւնը, Թաղային Մարմինները (էջ 325—339): Կը շեշտուի թաղին արհեստական բաժնին մէջ մասնաւորապէս ծնողադպրոցութիւնը (էջ 341—342): Պայլովը գերեզմանատան գլուխը վերջինն է (էջ 343—350). զիրքս կը փակուի չնորհակալիքով (էջ 351—352):

Ընթերցողը հեշտօրէն կը սահի մատե- նիս էջերուն վրայէն. լեզուն պարզ է՝ նիւթը հետաքրքրական. Սամաթիոյ հայ անցեալին ու ներկային մասին առատ պաշար կը գտնէ ա- նոր միտքը: Նկարներու ու խմբանկարներու առատութիւնը զբնիւր մէջ՝ աւելի կենդանի ու գրաւիչ կը դարձնէ զայն: Հեղինակին ծրագիրը, զործքիս նպատակն իրագործուած են հոն: Առարկելիք կէտ մը կը կարծենք գտած ըլլալ. ըստ մեզ լուսադոյն կ'ըլլար ա- ուաջին գլուխները աւելի պատմական ուղղու- Թեամբ մշակել քան պարզապէս բանասէր- ներու կարծիքները քաղելով գեանդել. ասով ընթերցողը աւելի պիտի օգտուէր:

Հ. Պ. Ե.

DR. ARTASCHE ABEGHIAN: Neuarmenische Grammatik, Ost- und Westarmenisch mit Lesestücken und einem Wörterverzeichnis. էջ X + 292 (առաջին 15 էջերը կրկին են): Walter de Gruyter & Co., Berlin und Leipzig, 1936. RM 10.—. (Lehrbücher des Seminars für orientalische Sprachen zu Berlin, Bd. XXXVI.)

Բերլինի Արեւելեան լեզուներու Սեմինա- րին մէջ հայ լեզուի ուսուցչապետին այս գործը բացառիկ զերբ մը կը գրուէ մինչեւ հիմայ եւրոպական լեզուներով հրատարա- կուած հայերէն քերականութիւններու շար- քին մէջ: Ասոնցմէ ոչ մէկը այնպիսի խոր, հիմնական ու հմտալից կերպով նիւթին մեր- ձեցած է, ինչպէս Արեւելեան իր այս քերա-

կանութեամբ: Լեզուապատմական ակնարկով մը հայերէնի անցուցած դարդացման ու անկման շրջանները ներկայացնելէ եւ մեր բազմաթիւ դաւառարարութեան մասին խօսելէ ետք՝ կ'անցնի բուն նիւթին, որ է արեւելեան եւ արեւմտեան հայերէնի քերականութիւնը ականդել: Ամէն քայլափոխին՝ աշխարհաբարի այս գլխաւոր երկու ներկայացուցիչներու առանձնայատկութիւնները վեր կը հանէ ու կը շեշտէ, նոյն խի օտար անուններու տառադարձութեան դէպքին:

Խորհրդային Հայաստանի ուղղադրութեան մասին խօսելով քերականական մասը կ'աւարտի, որուն կը կցէ իբր յաւելում զբարարի փոփոխման (հոլովմանց եւ լծորդութեանց) գլխաւոր կանոնները եւ վերջնապէս ընթերցուածներ երկու բարբառներով ալ եւ բառացանկ մը:

Աշխարհաբարի շատ մը ձեւերը մեկնելու համար կը դիմէ հնութեան՝ ոսկեդարեան եւ ոչ-ոսկեդարեան ու միջնադարեան հայերէններուն. նման դէպքերուն հեղինակը երբեմն անկախ կարծիքներ կը յայտնէ. այսպէս կը եւ կու մասնիկներու ծագման մասին: Մինչ Այտընեան (Քննական Քերականութիւն, էջ 76) կը համարի թէ «գուցէ ներքի ըլլայ հեռաւոր նմանութիւն մը փնտռել կայ ու, բառերուն յօդաւորութեան մէջ, որով կու տեսնուի՝ մեկնուի կայ ու տեսնուի», եւ Մ. Արեղեան (Հայոց լեզուի տեսութիւն, Երեւան 1931) կը կարծէ թէ կայ սկզբնական անկախ բառ մը եղած ըլլայ՝ «ասա» նշանակութեամբ, հեղինակս զայն հաւասար կ'ըմբռնէ քոյ բառին, որ իւր նախնական հին նշանակութեամբ հոմանիչ է կայ բառին (էջ 95): Մինչեւ մասնագիտութեան զայցող այս ծանօթագրութիւնները մատենիս գործածութիւնը իբր գասագիրք շատ պիտի դժուարցնէին, եթէ անոնք խնամքով բուն մարմնէն զատուած չըլլային տպելով փոքրագիր գրերով:

Այսպիսի ընդարձակ նիւթի մը մէջ զարմանալի չէ, որ փոքրիկ անճշտութիւններ ստորած ըլլան. այսպէս գրերու արտասանութեան մասին խօսած ժամանակ Վերի համար կ'ըսէ թէ գերմ. ի կը համապատասխանէ (էջ 27, § 20). այս իւր ընդհանրութեան մէջ ճիշդ չէ, վասն զի գերմաներէն և ճայնական կրկին արժէք կը ներկայացնէ. նա կարծի է բառակիրին, ու կակուղ է բառամիջին կամ բառաւերջին. այս է պատճառը, որ ուսուցիչներ մէջ գերմաներէնէ փոխառեալ բառերուն կակուղ կերէն վերջ է կը գնէին. Վերի կակուղ ճայն մը հայերէնի մէջ օտար է, ուստի ճշգրտութեան համար պէտք էր ըսուիլ թէ նա գերմ. բառակիրի ի համարժէք է:

Այսպիսի յաջող դործի մը համար կը մնայ մեզ մաղթել սիրալիր ընդունելութիւն մը օտար լեզուագէտներու կողմէ՝ եւ Արեւելեան Լեզուներու Սեմինարի Վարիչին Պրոֆ. Դիւ. Ի. Ի. Շաեդերի ձայնակցելով մենք ալ կը յուսանք, որ գերման ժողովրդի հետ «ճագումով, քրիստոնէական դաւանանքով եւ յունական կրթութեամբ կապուած Հայուն հրատարիչ ու արտայայտութեան ձեւերով հարուստ լեզուն ուսումնասիրութիւնը՝ իւր երկու գլխաւոր ներկայացուցիչներով, Արեւելեան աշխատութեամբ՝ նոր զարկ մը կը ստանայ»:

Հ. Վ. ԻՆՊԻԻՉԵԱՆ



233. Գոսեան Հ. Յ., Նոյն՝ Հատոր Բ. Չմիւսնից վիճակին գլխաւոր քաղաքները եւ Հայք: 1890, 80, էջ Ժ + 161. 15 պատկերներով: (Ազգ. Մատ. 32:) Ձր. 2-50  
= Հատոր Ա.՝ Պատմութիւն Չմիւսնից. Հայոց հին դաղթականութիւնը. Հայոց այժմեան վիճակը, դպրոցները, եկեղեցիները, ընկերութիւնները եւ յիշատակարանները:  
Հատոր Բ. կը ներկայացնէ՝ 1. Այտընի, 2. Նազիբի, 3. Տէնիզի, 4. Էօտէմի, 5. Պայնորի, 6. Սէօքէի, 7. Գուշ-Ատայի, 8. Մանիսայ, 9. Գըրգալաճի եւ 10. Գասապի հայ դաղթականութիւններն՝ ամենայն մանրամասնութեամբ:

234. Ֆասուէր Ռ., Հայաստանի ուսիկաններու ժամանակագրութիւնը 833—887 տարիներու շրջանին: Թրգմ. Հ. Վ. Ինգլիզեան: 1933, 80, էջ 120: (Ազգ. Մատ. 132:) Ձր. 3.—

235. Ֆետտէր Պ., տե՛ս Տաշեան Հ. Յ., Հայկական աշխատասիրութիւնը:

236. Օսփալդ Ֆ., Եկրախօսութիւն Հայաստանի: Թրգմ. Հ. Յ. Տաշեան: 1933, 80, էջ Թ + 285: (Ազգ. Մատ. 125:) Ձր. 4.—

3. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՅՆ, ԼԱՏԻՆ ԵՒ ԳԱՂՂԱՎԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

1. Աւանիմի Հ. Ն., Վարք եւ Վարդապետութիւն Յիսուսի Քրիստոսի: Թրգմ. Հ. Մ. Էմիլեան: 1848, 80 (փոքր), էջ ԺԱ + 655: Սպառած:

2. Բենեդիկտոսի (Ս.), Կանոնք. զբարար Թարգմանութիւն: 1842, 120, էջ Ը + 138: Ձր. 1.—

3. \*Բնուսեալ, Խօսք վասն տիեզերական պատմութեան. զբարար: Թրգմ. Հ. Մ. Գարագաշեան եւ Հ. Յ. Գաթըրճեան: 1841, 80 մեծ., էջ ԺԶ + 574: Ձր. 15.—

4. Գաթագաշեան Հ. Մ., Ճարտարախօսութեան արուեստ կամ Ճարտասանութիւն (զբարար): 1844, 80, էջ ԻԲ + 300: Ձր. 2.—

5. Եզրոս, Առակք (Եզրոսի): Թրգմ. յԱղայ Մարգարայ Շեհրիմանեանց: 1784: Սպառած:

6. Լաֆոնդեմ, Առակք (Լաֆոնդեմի): (Գրարար): Թրգմ. Ա. Մ. Գարագաշեան: 1894, 80 մեծ., էջ 480: (Արամ Ընկ. 14:) Ձր. 4-50

7. — — Նոյն, ազնիւ թղթի վրայ: Ձր. 5.—

8. Լեւոնի մեծի, Սրբայն — —, Հոռոց քահանայպետի ծառք: Թարգմանութիւն ի լատին ընկերէ Արհիպ. Գերապայճառ Տեառն Յովհաննու Վ. Քիւրէշեան, Արքեպիսկոպոսի Ատալից: 1890, 80, էջ 396: Ձր. 5.—

9. Կիկերոնեայ՝ Խօսք վասն ծերութեան (զբարար): Թրգմ. Հ. Յ. Գաթըրճեան: 1843, 80 մեծ., էջ 40: Ձր. 1.—

10. — — Նորին, վասն բարեկամութեան (զբարար): Թրգմ. Հ. Յ. Գաթըրճեան: 1852: Սպառած:

11. Կիպրիանու (Ս.), Գիրք վասն միութեան եկեղեցւոյ (զբարար): Թրգմ. Հ. Յ. Գաթըրճեան: 1846, 80, էջ 24: Ձր. —50

12. Կուրտայ Թուփայ, Վասն գործոց եւ արութեանց Աղեքսանդրի մեծի (զբարար): Թրգմ. Հ. Յ. Գաթըրճեան. 2 Հատոր: 1844, 120 փոքր., Հաթըրճեան. 2 Հատոր: 1844, 120 փոքր., Հատոր Ա., էջ 14 + 632: Հատոր Բ., էջ 512: ար. Ա., էջ 14 + 632: Հատոր Բ., էջ 512: Երկուքը միասին Ձր. 4.—

13. Հոռոցիկոս, Հրահանգք կատարման, ճառք Երեք (զբարար): Թրգմ. Հ. Փ. Ճամճեան: 1844, 120 փոքր., էջ 316: Ձր. 1-50

14. — — Ճառ վասն աղբատութեան (զբարար): Թրգմ. Հ. Ա. Այտընեան: 1846, 120 փոքր., էջ 148: Ձր. 1.—

15. Յուսիփիանու Ս., Պատասխանատուութիւնք Ա. եւ Բ. (զբարար): Թրգմ. Հ. Ս. Տէրվիշեան: 1872, 80 մեծ., էջ Ժ + 98: Ձր. 1.—

16. Նեպոս (Կ.), Վարք զօրավարաց անուանաց: Թրգմ. Հ. Ղ. Յոթնեան: 1842, 120 փոքր., էջ Գ + 365: Ձր. 1-50

17. Ոսկեբրան Ս. Յովհ., Ճառ: Թրգմ. Հ. Յ. Գաթըրճեան (զբարար): 1855, 80 մեծ., էջ 16: Ձր. 1.—

18. Ռալիմայ, Երգք վասն կրօնից: Թրգմ. Հ. Մ. Գարագաշեան: 1842, 120 փոքր., էջ Ը + 496: Սպառած:

19. Տնօրէնութիւն ճարգային կենաց կամ Նոր առակք Սողոմոնեան: Թրքեստ 1784: Սպառած:

20. Փլորիանու, Վիպասանութիւն Տովրիթայ (զբարար): Թրգմ. Հ. Փ. Ճամճեան: Սպառած:

21. \*Քսենոփոնոսայ, Կիրոսի խրատք: Թրգմ. Հ. Յ. Գաթըրճեան: 1843, 120 փոքր., էջ ԺԳ + 532 + 38: Ձր. 2-50

4. ԲԵՐԹՈՒԱՄԻ

1. Գաթըրճեան Հ. Ս., Տարւոյն չորս եղանակք, կամ Նկարագիր սքանչելեաց բնութեան: 1852, 80, էջ 380. 4 պատկերով: Սպառած:

2. Գուրեան Պ., Ընտիր քերթուածներ: 1922, 80, էջ 48: Ձր. 1.—

3. Երգք առ Գերպ. Արիստակէս Ազարեան (25ամեայ յուրեկին): 1852: Սպառած:

4. Երգք առ Գերպ. Արիստակէս Ազարեան (յաւուր տօնի անուան): 1842: Սպառած:

5. Ժողով ազգային կրթութեան: 1860: Սպառած:

6. Խեղապանց Ս. Յ., Տաղարան ժողովրդական երգոց: 1899, 80, էջ 52: Ձր. —50

7. Ոտանաւորք ի 16 լեզու: 1854: Սպառած:

8. Նուէր սիրոյ առ Վարամեան Պրն. Աղեքսանդր: 1840, 1843: Սպառած:

9. Նուէր սիրոյ առ Գերապայճառ Վարդան Ըստկաբեան: 1884: Սպառած:

10. Նուագք յայլեայլ լեզու: 1854: Սպառած:

11. \*Տէրվիշեան Հ. Ս., Այրի մայրն ու միամօր որդեակը: 1871, 20 մեծ., էջ 19: Ձր. 1.—

12. Ֆերանեան Յ. Եպս., Վառվառիա, Գ. Քերթուած ի չորս երգս (զբարար): 1891, 80, էջ 72. 1 պատկերով: Ձր. 1.—

5. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

1. Արեւելեան յիշատակագիրներ: 1851, 80, էջ 90: Ձր. 1.—

2. Աւագեան Հ. Ա., Մարիամ Մթուարթ: 1861, 80, էջ 344: Ձր. 1-50

3. Ազգեբան Հ. Ն., Ընդհանուր պատմութիւն հին ազգաց: Ա. Հատոր: 1861, 80, էջ 390: Ձր. 2.—

4. Գաթըրճեան Հ. Յ., Տիեզերական Պատմութիւն. տե՛ս 1. Հատուած. Թ. 62: